բատվական բնույթի արձանագրություն։ Այդ տարօրինակությունն առաջ է եկել նրանից, որ Հրանուշ թագուհին նախ կառուցել է տվել Գրիգորի բոլորակ եկեղեցին, որի կառուցումն արդեն ավարտված է եղել 1061 թվականին և նրան զուգահեռ շինել է տվել գրատունը, որն ավարտվել է 1063 թվականին։ Այդ երկու շենքերի կառուցումն ավարտելուց հետո դրել է տվել երկուսի կառուցման վերաբերող 1063 թվականի արձանագրությունը։ Իսկ մինչ այդ, 1061 թվականին, երբ Գրիգորի բոլորակ եկեղեցին արդեն շինված էր, իշխանաց իշխան Շապուհը նրա պատին գրել է իր նվիրատվական արձանագրությունը (նկ. 17)։

Եթե կառուցման արձանագրության մեջ եղեկեցու՝ Գրիգորի անվան նվիրված լինելը չի հիշատակված, ապա վանքի նորոգության վերաբերող 1652 թվականի արձանագրությունում հիշատակված է։ Սակայն այստեղ կարևորն այն է, որ այդ նորոգության ժամանակ մեծ չափով տուժել է շենքը և կորցրել իր արտաքին տեսքի փառահեղ պատկերը։ Ուստա Սարգիսն ու նրա աշակերտները քանդել են հին գմբեթն ու պատերի վերին շարքը, որի վրա էին տեղավորված արտաքին պատի որմնակամարները, դրա հետևանքով այժմ այդ կամարները չկան և եկեղեցու բարձրությունը բնականից կրճատված է մոտ 60 սմ։ Այնպես որ սկզբնական տաճարից տեղում մնացել են տաճարի պատերը, մինչև որմնասյուներից վերև կամարների ճյուղավորվող քանդակազարդ հիմքերը, որոնք այժմ աննպատակ ցցված են պատերի գլխին։ Նկատի ունենալով 11-րդ դարին պատկանող տաճարների ձևերը, պետք է ենթադրենք, որ հին գմբեթը, հավանաբար, ավելի մեծ տրամագիծ է ունեցել և թմբուկի վրա կրել է առաջին հարկաբաժնի պատերին համապատասխանող որմնակամարներ։ Այդ գմբեթի փոխարեն այժմ տաճարի վրա նստած է բոլորշի թմբուկով և կոնաձև վեղարով փոքրածավալ մի գմբեթ, նման մյուս տաճարների նույնպես վերաշինած գմբեթներին։



Նկ. 13. Գրատան ներքին տեսարանը։

9. Գրատան նախագավիթ։ Հյուսիսային կողմից գրատան կպած մի սրահ է, որի կառուցման թվականը հայտնի չէ, բայց պատերի վրայի բազմաթիվ արձանագրություններ-